



Ծախսերի և եկամուտների կառուցվածքը ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների մոտ 2013թ.-ի համար

ՀՀ վարկային կազմակերպությունների միություն



Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր


Սույն աշխատանքի նպատակն է վերլուծել ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների ծախսերի և եկամուտների կառուցվածքը, համեմատել տոկոսային և ոչ տոկոսային ծախսերի ու եկամուտների տարբերությունները, գնահատել տնտեսական արդյունավետության և շահութաբերության ցուցանիշները:

Ֆինանսական տեղեկատվությունը ձեռք է բերվել Կենտրոնական բանկի կողմից տարեկան կտրվածքով հրապարակվող ամփոփ տեղեկագրերից (www.cba.am): Սույն վերլուծությունում ներառվել են ՀՀ-ում գործող 21 բանկերի և 32 վարկային կազմակերպությունների տնտեսական ցուցանիշները 2013 թ.-ի համար:

Բանկերի և վարկային կազմակերպությունների ծախսերի և եկամուտների կառուցվածքը


Ծախսեր:

2013 թ.-ին բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր ծախսերը կազմել է 264.8 մլրդ դրամ, իսկ նրանց կողմից վճարված ընդհանուր հարկերը՝ 42.9 մլրդ դրամ: Այսպիսով, ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր ծախսերի 16.2%-ը կազմել են հարկային պարտավորությունները: Բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր ծախսերի մեջ տոկոսային ծախսերը կազմել են 144.8 մլրդ դրամ, իսկ ոչ տոկոսայինը՝ 120 մլրդ դրամ (Գծապատկեր 1 և 2): Հարկային պարտավորությունները՝ որպես ոչ տոկոսային ծախս, կազմել են բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր ոչ տոկոսային ծախսերի 35.7%-ը (Գծապատկեր 3):




Գծապատկեր 1. Բանկերի և վարկային կազմակերպությունների ծախսերի կառուցվածքը 2013 թ.-ին

Բանկերի մոտ առանձին վերցված՝ 2013 թ.-ի ընդհանուր ծախսերը կազմել են 241.9 մլրդ դրամ, որից 135.1 մլրդ դրամը տոկոսային ծախսերի, իսկ 106.8 մլրդ դրամը ոչ տոկոսային ծախսերի տեսքով (Գծապատկեր 2): Նույն ժամանակահատվածում, բանկերի կողմից կատարված հարկային պարտավորությունների գծով ծախսերը կազմել են 38.55 մլրդ դրամ, որի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կազմել է 15.9%, իսկ ոչ տոկոսային կամ գործառնական ծախսերի մեջ՝ 36.1% (Գծապատկեր 3):



Գծապատկեր 2. Բանկերի և ՎԿ-ների ծախսերի կառուցվածքը 2013 թ.-ին

2013 թ.-ին վարկային կազմակերպությունների ընդհանուր ծախսերը կազմել են 22.95 մլրդ դրամ, որից տոկոսային ծախսերը՝ 9.7 մլրդ դրամ, ոչ տոկոսային ծախսերը՝ 13.25 մլրդ դրամ (Գծապատկեր 2), իսկ հարկային պարտավորությունների գծով ծախսերը՝ 4.36 մլրդ դրամ: Հետևաբար, հարկային պարտավորությունների գծով ծախսերը կազմել են վարկային կազմակերպությունների ընդհանուր ծախսերի 19%-ը, իսկ ոչ տոկոսային ծախսերի մեջ՝ 32.9% (Գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Հարկային պարտավորությունների տեսակաբար կշիռը ոչ տոկոսային ծախսերում

Բանկերի և վարկային կազմակերպությունների ծախսերը այն ցուցիչն է, որի հիման վրա հաշվարկվում է միավոր վարկի ինքնարժեքը: Այսպիսով, բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր ծախսերի (264.8 մլրդ դրամ) տեսակարար կշիռը վարկային պորտֆելի (1930.5 մլրդ դրամ) մեջ, կամ որ նույնն է միավոր վարկի ինքնարժեքը կազմում է 13.72%, որից 7.5 տոկոսային կետը կազմում են տոկոսային ծախսերը, իսկ 6.22 տոկոսային կետը՝ ոչ տոկոսային կամ գործառնական ծախսերը:


Բանկերի մոտ առանձին վերցված՝ միավոր վարկի կամ վարկային պորտֆելի միջին ինքնարժեքը կազմում է 13.45%, որից 7.51 տոկոսային կետը ի հաշիվ տոկոսային ծախսերի, իսկ 5.94 տոկոսային կետը՝ ոչ տոկոսային ծախսերի: Վարկային կազմակերպությունների մոտ միավոր վարկի ինքնարժեքը կազմում է 16.7%, որից 7.1 տոկոսային կետը ի հաշիվ տոկոսային ծախսերի, իսկ 9.6 տոկոսային կետը՝ ոչ տոկոսային ծախսերի:

Այսպիսով, բանկերի մոտ միավոր վարկի ինքնարժեքը (13.45%) մոտ 3.25 տոկոսային կետով ցածր է քան վարկային կազմակերպությունների մոտ (16.7%): Միևնույն ժամանակ, միավոր վարկի ինքնարժեքի մեջ բանկերի տոկոսային ծախսը (7.5%) մոտ 0.4 տոկոսային կետով ավելի բարձր է վարկային կազմակերպությունների հետ համեմատ (7.1%), իսկ բանկերի ոչ տոկոսային ծախսը (5.94%) մոտ 3.75 տոկոսային կետով ավելի ցածր է, քան վարկային կազմակերպությունների մոտ (9.7%): Բանկերի հետ համեմատ վարկային կազմակերպությունների միավոր վարկի ինքնարժեքի մեջ տոկոսային ծախսի ցածր տեսակարար կշիռը պայմանավորված է վարկային կազմակերպությունների կապիտալիզացիայի ավելի բարձր մակարդակով, այսինքն՝ վարկային պորտֆելում սեփական կապիտալի ավելի մեծ տեսակարար կշիռով: Միևնույն ժամանակ, բանկերի հետ համեմատ վարկային կազմակերպությունների միավոր վարկի ինքնարժեքի մեջ ոչ տոկոսային ծախսերի բարձր տեսակարար կշիռը պայմանավորված է գործառնական ծախսերի ավելի բարձր մակարդակով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարկային կազմակերպությունները հիմնականում զբաղված են միկրոֆինասավորմամբ և նրանց մոտ միջին վարկի մեծությունը շատ ավելի փոքր է, այսինքն՝ միավոր պորտֆելի

սպասարկման համար ավելի շատ աշխատուժ է ներգրավված: Հայտնի է, որ վարկային կազմակերպությունների մոտ մեկ վարկային մասնագետի հաշվով վարկային պորտֆելը մի քանի անգամ զիջում է բանկերի համանման ցուցանիշը:

Եկամուտներ:

2013 թ.-ին բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր եկամուտները կազմել են 355,1 մլրդ դրամ, այդ թվում՝ տոկոսային եկամուտները՝ 280.5 մլրդ դրամ, իսկ ոչ տոկոսային եկամուտները՝ 74.6 մլրդ դրամ (Գծապատկեր 4): Այսպիսով, բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային պորտֆելի եկամտաբերության ցուցիչը, կամ ընդհանուր եկամուտների և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 18.39%, որից 14.53 տոկոսային կետը ստացվել է ի հաշիվ տոկոսային եկամուտների, իսկ 3.86 տոկոսային կետը ոչ տոկոսային եկամուտների հաշվին¹:




Գծապատկեր 4. Բանկերի և վարկային կազմակերպությունների եկամտի կառուցվածքը 2013 թ.-ին

2013 թ.-ին բանկերի տոկոսային եկամուտները կազմել են 254.9 մլրդ դրամ, ոչ տոկոսային եկամուտները՝ 67.4 մլրդ դրամ (Գծապատկեր 5), իսկ վարկային պորտֆելը՝ 1798.3 մլրդ

¹ Ի տարբերություն վարկային կազմակերպությունների, բանկերը ունեն վարկերի սպասարկման հետ կապ չունեցող այլ ծառայություններից ստացվող ոչ տոկոսային եկամուտներ: Մակայն, սույն վերլուծությունը ընդհանրացնելու համար բանկերի վարկերի սպասարկման հետ չկապված այլ ոչ տոկոսային եկամուտները նույնպես ընդունվել են հիմք միավոր վարկի եկամտաբերության հաշվարկի համար: Հարկ է նշել նաև, որ բանկերի այլ ծառայությունների (վարկերի սպասարկման հետ կապ չունեցող) ծախսերը նույնպես ընդգրկված են միավոր վարկի ինքնարժեքի հաշվարկման հիմքում: Հետևաբար, սույն վերլուծության շրջանակներում կատարված միավոր վարկի ինքնարժեքի և եկամտաբերության հաշվարկները առավելապես արտահայտում են այդ մեծությունների ճիշտ պատկերը:

դրամ: Այսպիսով, վարկային պորտֆելի եկամտաբերության ցուցիչը կազմել է 17.92%, որից 14.18 տոկոսային կետը՝ տոկոսային եկամուտների, իսկ 3.74 տոկոսային կետը՝ ոչ տոկոսային եկամուտների հաշվին: Նույն ժամանակահատվածում, վարկային կազմակերպությունների տոկոսային եկամուտները կազմել են 25.6 մլրդ դրամ, ոչ տոկոսային եկամուտները՝ 7.1 մլրդ դրամ (Գծապատկեր 5), իսկ վարկային պորտֆելը 137.1 մլրդ դրամ: Հետևաբար, վարկային կազմակերպությունների վարկային պորտֆելի միջին եկամտաբերության ցուցիչը կազմել է 23.84%, որից 18.63 տոկոսային կետը տոկոսային եկամուտների, իսկ 5.21 տոկոսային կետը ոչ տոկոսային եկամուտների տեսքով²:




Գծապատկեր 2. Բանկերի և վարկային կազմակերպությունների եկամտի կառուցվածքը 2013 թ.-ին

Վերոնշյալ հաշվարկները ցույց են տալիս, որ վարկային կազմակերպությունների վարկային պորտֆելի միջին եկամտաբերության ցուցիչը (23.84%) մոտ 5.92 տոկոսային կետով գերազանցում է բանկերի նույն ցուցանիշը (17.92%), ընդ որում, 4.45 տոկոսային կետը ի հաշիվ տոկոսային եկամուտների, իսկ 1.47 տոկոսային կետը ի հաշիվ ոչ տոկոսային եկամուտների տարբերության:

² Ի տարբերություն հարկային մուծումների վերլուծության, որտեղ օգտագործվել էին 14 խոշոր վարկային կազմակերպությունների տվյալները, վերցված ՀՀ Ֆինանսների նախարարության հրապարակումներից, վարկային կազմակերպությունների ծախսերի, եկամուտների և վարկային պորտֆելի ցուցանիշները կատարվել են բոլոր 32 վարկային կազմակերպությունների համար, որոնց տվյալները վերցվել են ՀՀ ԿԲ հրապարակումներից:

Տոկոսային մարժա:

Բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր վարկային պորտֆելի մարժան, այսինքն՝ վարկային պորտֆելի ընդհանուր եկամտաբերության (18.39%) և ինքնարժեքի (13.72%) տարբերությունը 2013 թ.-ին կազմել է 4.67%: Նույն ցուցանիշը, բանկերի մոտ առանձին վերցված, կազմել է 4.47%, վարկային կազմակերպությունների մոտ՝ 7.14% (Գծապատկեր 6):



Գծապատկեր 6. Բանկերի և վարկային կազմակերպությունների տոկոսային մարժան

Բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային պորտֆելի տոկոսային մարժայի տարբերությունը կազմում է մոտ 60%: Սակայն այս ցուցանիշը դեռևս չի վկայում վարկային կազմակերպությունների շահութաբերության ավելի բարձր մակարդակի մասին: Այսպես, 2013 թ.-ին բանկային համակարգի սեփական կապիտալի նկատմամբ շահութաբերությունը (ROE), որ ցույց է տալիս զուտ շահույթի և սեփական կապիտալի հարաբերակցությունը, կազմել է 8.36%, իսկ վարկային կազմակերպությունների մոտ՝ 7.33%: Չնայած վարկային պորտֆելի տոկոսային մարժայի ավելի ցածր մակարդակին՝ բանկերի շահութաբերությունը ավելի բարձր է վարկային կազմակերպությունների հետ համեմատ, որը պայմանավորված է բանկերի մոտ պարտքայնության կամ ֆինանսական լծակի ավելի բարձր գործակցով (leverage ratio or debt to equity ratio): Այս գործակիցը ցույց է տալիս սեփական կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցությունը, այսինքն՝ միավոր սեփական

կապիտալի դիմաց ներգրավված պարտավորությունների գործակիցը: Բանկային համակարգում ֆինանսական լծակի գործակիցը կազմում է 5.46, իսկ վարկային կազմակերպությունների մոտ՝ 1.71: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ վարկային կազմակերպությունների կապիտալիզացիայի գործակիցը (սեփական կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը) մի քանի անգամ գերազանցում է բանկային համակարգի նույն ցուցանիշին:

Այսպիսով, չնայած վարկային կազմակերպությունների հետ համեմատ ավելի ցածր տոկոսային մարժային, բանկերի տնտեսական գործունեության շահութաբերությունն ավելի բարձր է, որը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

1. Իրենց իրավական կարգավիճակից ելնելով՝ բանկերը ունեն ֆինանսական միջոցներ ներգրավվելու ավելի լայն գործիքներ, որի հաշվին ունենում են ավելի բարձր ֆինանսական լծակի հնարավորություն, այսինքն՝ կարողանում են միավոր կապիտալի դիմաց ավելի շատ պարտավորություններ ունենալ:
2. Ի տարբերություն վարկային կազմակերպությունների՝ բանկերն ունեն ավելի մեծ հասանելիություն պետական երաշխառնություններով ներգրավված արտոնյալ պայմաններով տրամադրվող ֆինանսական միջոցներին:

Ի տարբերություն վարկային կազմակերպությունների՝ բանկերի միջին վարկի մեծությունը մի քանի անգամ մեծ է, որի հաշվին ոչ տոկոսային ծախսերը կամ միավոր վարկի տրամադրման և սպասարկման փոփոխական ծախսերը (հիմնականում աշխատուժ) էականորեն ցածր են: